

Հունիսի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

10/06/12թ. «Ուլիս»-«Արարատ» խաղին «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Կարեն Խաչատրյանի հեռացման, մրցակցին հայիոյելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ որակազրկել 3 խաղով, «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

10/06/12թ. «Ուլիս»-«Արարատ» խաղին «Ուլիս» թիմի ֆուտբոլիստ Արամ Բարեղամյանի հեռացման, մրցակցին հայիոյելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Ուլիս» ֆուտբոլային ակումբին տուգանել 70000 դրամ:

11/06/12թ. «Միկա-2»-«Արարատ-2» խաղին «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստ Արթուր Մեսրոպյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 դրամ:

11/06/12թ. «Միկա-2»-«Արարատ-2» խաղին «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստ Արայիկ Մկրտչյանի հեռացման, անհասցե հայիոյելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

11/06/12թ. «Ալաշկերտ»-«Բանանց-2» խաղին «Բանանց-2» թիմի ֆուտբոլիստ Խաչատուր Ավետիսյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 դրամ:

11/06/12թ. «Գանձասար-2»-«Շենգավիթ» խաղը «Շենգավիթ» թիմի կողմից չտեսագրելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ «Ուլիս» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 դրամ:

07/06/12թ. «Շենգավիթ-95»-«Գանձասար-95» խաղին «Գանձասար-95» թիմի կազմում որակազրկված ֆուտբոլիստների մասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ «Գանձասար-95» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Գանձասար-95» թիմի մարզիչ Աշոտ Մանուչարյանին որակազրկել 2 խաղով, «Գանձասար» ֆուտբոլային ակումբին տուգանել 40000 դրամ:

09/06/12թ. «Օձուն-98»-«Վեդի-98» «Վեդի-98» թիմի ներկայացուցչի նախախաղային խորհրդակցությանը չմասնակցելու և խաղը ուշ սկսելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 17-րդ և 18-րդ կետերի համաձայն՝ Վեդու մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 3000 դրամ:

12/06/12թ. «Բանանց-1-99»-«Միկա-99» խաղին «Բանանց-1-99» թիմի և

նստիկանության ներկայացուցիչների նախախաղային խորհրդակցությանը չմասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 10000 դրամ:

22/05/12թ. «Իջևան-98»-«Արտաշատ-98» խաղին կեղծ փաստաթղթերով ֆուտբոլիստ Գեղամ Հարությունյանի մասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ «Արտաշատ-98» թիմին գրանցել տեխնիկական պարտություն Գ. Հարությունյանի մասնակցությամբ բոլոր հանդիպումներում, Արտաշատի համալիր մարզադպրոցին տուգանել 50000 դրամ: